ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ - ՀՀ Փաստաբանների պալատի նախագահի 14.09.2013թ ընտրությունների կապակցությամբ

22.08.2013 20:10

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
հարգելի թեկնածուներ

Հիմք ընդունելով ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 8.7 (4), 8.32 և 13.6 կետերի պահանջները, ինչպես նաև
ելնելով Պալատի կանոնադրության 8.6 կետով նախատեսված սկզբունքներից,

1. ***խնդրում ենք*** հինգօրյա ժամկետում ներկայացնել Ձեր կենսագրական տվյալները պարունակող նյութ (A4 ձևաչափի թղթի վրա, լուսանկարով), որը կտեղադրվի ցուցատախտակի վրա, ինչպես նաև Պալատի պաշտոնական կայքէջում (www.advocates.am): Կենսագրական տվյալներից բացի նույն էջի վրա կարող եք լրացնել Ձեզ համար նախընտրելի ցանկացած տեղեկություն: Նշված ժամկետում Ձեր կենսագրական տվյալները չներկայացնելու դեպքում, Հաշվիչ հանձնաժողովը Պալատի Ձեր անձնական գործից կհրապարակի կենսագրական տվյալները.

2. ***տեղեկացնում ենք***, որ Պալատի ընդհանուր ընդունարանում գտնվող սեղանի վրա կարող եք տեղադրել Ձեր նախընտրական բուկլետները (բուկլետների տրցակ) կամ այլ փաստաթղթերը, որոնց սեղանի վրա զբաղեցնող մակերեսը չի կարող գերազանցել 220x300 մմ: *Միաժամանակ, այդ նյութերը պետք է վերցնեք 2013թ. սեպտեմբերի 13-ին մինչև ժամը 18.00-ն.*

3. ***տեղեկացնում ենք***, որ Պալատի ընդհանուր ընդունարանում գտնվող պատին կարող եք տեղադրել Ձեր նախընտրական մեկ պաստառ, որը չի կարող գերազանցել A2 ձևաչափը: *Միաժամանակ, այդ պաստառը պետք է վերցնեք 2013թ. սեպտեմբերի 13-ին մինչև ժամը 18.00-ն.*

4. ***տեղեկացնում ենք***, որ Պալատի պաշտոնական կայքէջում (www.advocates.am) կարող եք ներկայացնել Ձեր նյութերը առանց որևէ սահմանափակման.

5. ***տեղեկացնում ենք***, որ Պալատի դահլիճը յուրաքանչյուրիդ կարող է տրամադրվել երկու անգամ մինչև երեք ժամով՝ նախապես գրաֆիկը գրավոր ճշտելով Պալատի Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հետ: Խնդրում ենք երեք օրվա ընթացքում գրավոր ներկայացնել Ձեր գրաֆիկը, եթե Ձեր ծրագրավորած օրը և ժամին կլինեն միջոցառումներ կամ դրանք կհամընկնեն մյուս թեկնածուի առաջարկած օրվա և ժամի հետ, ապա այդ հարցը լրացուցիչ կքննարկվի Ձեզ հետ.

6. ***տեղեկացնում ենք***, որ Պալատի հաշվիչ հանձնաժողովի նիստերի օրվա և ժամի մասին կարող եք տեղեկանալ Պալատի կայքէջից:

Հարգանքով՝

Հաշվիչ հանձնաժովի նախագահ՝ Ապ.Պողոսյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })